




ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԵՄԲԱԳԻՐ  
ՉԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷԶԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 46

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏԻՈՒՐ ՊԱՏԿԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԷՆ. — Մովսիսի  
աղօթողունին

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ. — Լսել եւ կատարել

ՍԻՔՆԵԱՅ ԴՊՐՈՅ. — (Ը.) Պետրոս եպ. Սիւնեաց

ՄՏԱՆՈՒՄՆԵՐ. — Բարիք եւ Չարիք. — Բարոյական  
եւ բարոյականութիւն

ՏԷՐԷԱԷՅԻ, ՄԻԼԹԷՂԱԽԱՍ, Բայա

Ո՞՞՞՞ ընտրեմ

ՄԱՄԼԱՅ ԱՐԶԱՐԱՆԳ. — Օրմանեան Ս.ի Թեր ու դէմ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շարժումն կարեւոր լուրեր

ՍՈՒՐԷՆ Մ. Վ. ԴԱԼԷՄԵԱՆ

ԳՐԻԳՈՐԻՍ

ԳՆԷԼ Մ. Վ. ԴԱԼԷՄԵԱՆԵԱՆ

ԽԱԶԻՍԱՐ

ԽԱԶԱՏՈՒՐ ՔԶ. ՊՕՂԻԿԵԱՆ

ՋԱԽԱՅԵՅԻ

« ՏԱԶԱՐ »-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է  
դիմել առ Չարմայր Քահանայ Կեղիւեան, Կ. Պոլիս, Պեշիկթաշ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمنی کلیسا سنده « داجار » غزتیسی مدیری باباس زارمیر افندی

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»  
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

# ՕՍՄ. ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

شركة تجارية عثمانية

## SOCIÉTÉ COMMERCIALE OTTOMANE

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ

ԿԵԴՐՈՆՍԵՂԻ Կ. ՊՈԼԻՍ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ Հ.Ա.Յ. ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԳՐԱՄԱՆՆԱԴՐՆԵՐԸ ԱՌԹԱՄՆԱՅ ԿԵՐՊՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՆՆ

ՍԹԱՆԳՈՒԼ, ԳԱԹԵՐՃԸՕՂԼՈՒ ՅԱՆ

Հայկական ողջն զրամական հաստատութիւնը կ'ընէ փոխառութիւններ՝ առեւտրական առանձնութեամբ, մուրհակներու, փոխանակագիրներու, բաժնեթուղթերու, պարտաթուղթերու, ապրանքներու եւ բնոյթագիրներու վրայ:

Կուտայ չէքեր, վարկագիրներ, փոխանակագիրներ եւ հետադրական վճարումի հրամաններ՝ ինչպէս թուրքիոյ նոյնպէս աշխարհիս բոլոր մասերուն վրայ:

Կը գնէ եւ կը ծախէ ամեն տեսակ բաժնեթուղթեր եւ պարտաթուղթեր, թէ՛ մեր եւ թէ՛ բոլոր օտար հրապարակներուն վրայ, ինչպէս եւ օտար զրամներ:

Կը գանձէ եւ կը ղեղչէ առեւտրական առանձնութեամբ, մուրհակներ, փոխանակագիրներ, բաժնեթուղթեր եւ կտրոններ:

Կ'ընդունի զրամական աւանդներ նպաստաւոր պայմաններով:

Դրամատունս հաստատած է Ասիայի տեղեկութիւններու համար լաւագոյն կերպով կազմակերպուած սպասարկութիւն մը:

## ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ

Խնայողութիւնը մեր համայնքին մեջ քաջաբերելու համար կ'ընդունի քանակական (25) դրուշէն սխեմով գումարներ:

Դրամատունս կը կատարէ նաեւ, թէ՛ իր հաշուոյն, թէ՛ մասնակցութեամբ եւ թէ՛ ուրիշներու հաշուոյն ամէն տեսակ արդիւնաբերութիւններու եւ ապրանքներու գնում, վաճառում, փոխանակութիւն, ներածում եւ արտածում:

Կ'ընդունի ներկայացուցչութիւն թէ՛ տեղական եւ թէ՛ օտար տուններու:

Կը կազմէ առեւտրական եւ ճարտարարուեստական ընկերութիւններ եւ կը մասնակցի անոնց: Կ'ընէ հանրօգուտ շինութեանց վերաբերեալ ամէն տեսակ ձեռնարկութիւններ:



## ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 46

ՑԵՆՈՒՐ ՊԱՏԱՆԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԵՎԱՆ

### ԾՈՎԱՓԻ ԱՂՈԹՈՂՈՒՅԻՆ

Թեմական այցելութեան ելած՝ Ս. զիւղը կը գտնուէի:

Տաւր օրերէ ի վեր չըջագայած վայրերու մէջ, ի լուր ցնցող յայտնութիւններու, եւ ապշեցուցիչ պատմութիւններու, ես ալ հարստահարուած ժողովուրդին հետ հոգեկան զգայի փոփոխութիւններու ենթարկուած էի:

Եւ զճ Հայ ժողովուրդ. անիկա իր դարաւոր տեսքը կը խօսէր ինծի, անիկա Սահմանադրութեան անունով մկրտուած լաւանք, եղբայրութեան, հաւատարմութեան անունով սրբազործուած քաջանք կը պատմէր ինծի՝ սոսկացնող շեշտերով եւ փղծկեցնող ակնարկով: Ի՞նչ ընէին այս յուսահատ ու թշուառ արարածները, ի՞նչ պէտք եւ ո՞ր պիտի գտնէին զոչըռնի բերալախտին տակ ջախջախուած Հայու այս զաւակները, որոնք լային իրենց ցաւը:

— Մեր պապերուն Աստուածն էլ հերտառած է, չի լսեր մեզիս պատմենք, պատմենք, այսպէս մեր սիրտը կը պաղտնայ: Ու կը պատմէին...

Հէ՛գ գիւղացիներ, վստահ էին թէ իրենց ծովացած տեսերուն՝ ամբողջովին տեսնան չէի կրնար տալ, բայց ընդհանուրի գէմքին վրայ որոշակի կը կարգայի այն հոգեկոն միտքարտիւնը, զոր կ'ուսնեայ մարդ, երբ անկեղծ վշտակցողի մը եւ իրեն հետ կոծող ու լացողի մը կը հանդիպի: Այս խիստ պատճառաւ չէին ուզիր բաժանումս, ու կը շարունակէին իրենց արիւնաւնդի պատմութիւնը անհատնում:

Բաժանում:

Գրեթէ զիւղովի յուղարկ կուգան, ու ամէնքը միասին արտասուելից աչքերով կը գոչեն:

— Հայրիկ, մի՛ մոռնար մեզի, գրէ՛, ներկայացուր մեր ցաւերը ուր որ աճի է: Ախ, շատ ինչ կը սպասեն ինչ:

Կը սրտապնդեմ գիրենք, կառավարութեան արդարադատութեան վրայ կը հրաւիրեմ իրենց ուշադրութիւնը, եւ արցունքը աչքիս, հազար գոհութիւն եւ օրհնութիւն նուիրելով՝ կ'աղաչեմ որ ետ դառնան:

Ո՛ր եւ ի՞նչ սրտով սակայն... զրգոյստ հոգիներ, անմեղ ողջակէզներ, ծնողք կիսամուտ, կական երկնազդորդ, արիւն արդար, տեսիլ սրտակէզ, հոգ տ-

նիծեալ եւ խրատեալ, երկի՛ր սարսուռի եւ սխրալի . . . դո՛ւն Հայոց երկի՛ր ու գե-  
րեզման . . .

Ճամբորդութեանս միջոցին ասիական  
ուղեւորն մը կրկնէր ա մէն դժուարութիւն-  
ներու տոկացի եւ ցաւ չզգացի բնաւ .  
պարտականութեան ձայնն ու սէրը կը  
թեթեւեղէր ամէն ինչ, միայն ժողովուր-  
դիս տառապանքն ու վիշտերը պարտաւսած  
էր զիս հողեպէս եւ ֆիզիքապէս։ Այս  
պարագան զգացած էին նաեւ հետեւորդ-  
ներս, որոնց յաճախակի ստիպումին վրայ  
պարտաւորուեցայ հանգիստ ատենը Ս .  
գիւղը որ հիմնուած է Վանայ խնկաբոյր  
ծովափին վրայ։

Ի՛նչ օգուտ՝ սակայն՝ արտաքին, պատ-  
րող հանգուտութիւնը, երբ մարդ ներքնա-  
պէս յուզուած է ու փոթորկած։

Դիշեր է, ու տակաւին ազդիս ցաւերը  
կը մրտենմ ճերմակ էջերու վրայ, սիրտ  
բզբտող տեսարանները իրարու կը յաջոր-  
դեն մտքիս մէջ, ու պաղատագին կոչերը  
կ'արձագանգին ականջիս։ Մէկ կողմ կը  
նետում գրիչս, այլեւս անհնար է գրել, իսկ  
քնանալ՝ ա՛նկարելի Դուրս կ'ելլեմ իս-  
կոյն։ Քահանաներէն մին, եւ պահնորդ  
ոստիկան զինուորս ալ հրացան ի ձեռին  
ինձ կը հետեւին։

Հայաստանի ջինջ երկինք, լուրթ,  
կապուտակ համատարած պատառ մը գե-  
ղեցիկ, որուն վրայ ադամանդեայ աստղե-  
րը կը շողան ու կը պսպլան։ Լուսին ծի-  
ծաղկոտ, պայծառ ու չքեղ ցոլքերով պըլ-  
պըռն։ Բայլ մը եւս, եւ ահա եղերքն հոմ  
Վանայ ծովանուտ ծովուն, որուն բերեղ-  
եայ ծոցին մէջ կախուած, կիտուածանը-  
կարուած ու ցոլացած են, լուսնին արծա-  
թափայլ ճառագայթները, վառվռուն աստ-  
ղերուն պուտ պուտ լոյսերը, լեռներու  
վեհ ու թանձր շուքերը եւ տերեւախոտ  
ծառերու խորհրդաւոր ոտուերները։

Համայնապատկեր երկնային, ծով լու-  
սաւոր, որու առջեւ կը կարկամիմ . . .

Ախ, ծո՛ւղ. ի՛նչ անուշ յիշատակներ կը  
վերջիչեցնես ինծի։ Ծո՛ւղ, աչքս ի ծովը,  
միշտ ի ծովը, չեշտ ի ծովը։ Տիտէր է ան

ալ ինծի պէս, լուս է, չի խօսիր, կուլայ  
ու չի ծիծաղիր, կը վնասէ ու չի գտնիր,  
կը հարցնէ ու չի պտտախառնուիր։ Սրտիս  
նման ինքն ալ փոթորկած է ու կը ծըփ-  
ծփան իր ալիքները, հոգւոյս նման ինքն  
ալ յուզուած է ու կը թաւալի վեր ու  
վար, կտրծքիս նման ուռած է իր ալ  
կուրծքը բաբախուն, ու էութեանս մը-  
րըրկոտ խորերուն նման, ինքն ալ իր ծո-  
ցին խորերը կը կոծէ ալեծով . . .

Իբրեւ վշտակից ու ցաւակից ինծի,  
աւելի՛ կը մօտենամ իրեն, կը դիտեմ ու  
չեմ յագեցնար, կը չնչեմ ու չեմ կշտանար,  
կը վայելեմ ու չեմ զոհանար։ Կը տեսնեմ,  
իւր լպրծուն ալիք-էջերուն վրայ քանդակ-  
ուած կը տեսնեմ նախաճարերուս եր-  
բեմնի Սաջն ու Գահը, փառքն ու յարգը.  
խոյրն ու սաղաւարտը. ծիրանին ու հմի-  
փորոնը, գրիչն ու սուրը, դրոշմն ու դրօ-  
շակը, ու սրտէս՝ կը բայագանչեմ։ — Ի՛նչ  
հակասեցութիւն անցելոյն եւ ներկային  
մէջ, Տէ՛ր իմ . . .

Կը ցնցուիմ իսկոյն, բայագանչութեանս  
իբրեւ արձագանգ հեծկտուքի ձայն մը  
կը լսեմ, ուր կը սեւեւում աչքս խոր՝ ու-  
շաղրութեամբ։ Զարմանալի երևոյթ, ծո-  
վային պարի՛կ մըն է արդեօք թէ տեսիլ  
է աչքի։ Երկու քայլ եւս կը յառաջանամ,  
եւ ահա որոշակի կը լսեմ իր ձայնը. կին  
մըն է ան, աղօթողուհի մը, որ ճիշդ ծո-  
վափը ցասման խաչ-քարի մը առջեւ ծըն-  
րադիր կ'աղօթէ պաղատագին։ Իմ մէկ  
նշանացի շարժումիս վրայ, կը զգուշանան  
հետեւորդներս, երկիւղածութեամբ կա-  
տարուած աղօթքը չխանգարելու համար։  
Գիշերուան խաղաղ լուսնիան միջ. աստ-  
ղազարդ երկնքին տակ եւ ծովուն ներ-  
դաշնակ ու չափաւոր ալեծփուռն հաս  
կատարուած աղօթք մըն էր ան, աղօթք-  
ներուն գերագոյնը . . .

Աստուած իմ, այն ի՛նչ հուսալէ  
ինչ արտասուագին հառաչանք։ Արձանա-  
ցած մնացի տեղս, եւ իր աղօթքի բառե-  
րէն գուշակեցի որ, մայրական ծունկե-  
րուն վրայ մորթուած իր մէկ հատիկ  
զաւկի սիրոյն չզիմանալով՝ կ'ուզէ միտ-  
նիլ, անոր երթալ միանալու համար։

— Տէ՛ր իմ, կը գոչէր խեղճ աղօթող-  
ուհին, կուլամ, կը պաղատիմ ամէն օր .  
տարին վերջացաւ ու կ'աղբիւր տակաւին,  
հոգիս չեա առնիր: Տէ՛ր, ա՛ն հոգիս, ա՛ն  
հոգիս. մի՛ տանջեր ինծի, զաւակս չարա-  
չար մեռնելէն վերջ ինչո՞ւ եւ ի՞նչպէս  
ապրիմ: Կուլամ քու առջեւ ինկած ու  
շիրովան կ'ընեմ, Տէ՛ր, երկնաւոր Տէ՛ր.  
զաւակս ալ հիմակ երկինք ինծի կը սպա-  
սէ, ա՛յ չեմ կրնար, Տէ՛ր, ա՛յ չեմ կրնար  
համբերել անոր սիրտին, տա՛ր ինծի, զաւ-  
կիս մօտ տար ինծի: Ա՛խ, զաւա՛կս, ա-  
րիւնոտ շորերդ գիշերը գլխուս բարձ, եւ  
ցերեկները սրտիս վրայ կը պահեմ, որ օր  
անաջ հալի ու մաշի սիրտս: Ո՛ւր էք լեռ-  
ներ, վրաս ինկէք ու մահս բերէք: Ծո՛վ,  
անուշիկ ծով, ո՛ւր է զաւակս, ա՛ն ջու-  
րերուդ մէջ, անոր ասար դիս: Ա՛նպո՛վ ինձի,  
ի՞նչպէս խմելոցսն ճիւղան զաւակս: Ի՞նչ-  
պէս չկուրցան աչքերս որ մահդ տեսնեմ,  
անմեղ ես վրուս, ի՞նչպէս չչորցան այս  
ծունկերը, որոնց վրայ դու ինչ կտրեցիր,  
հոգի՛ս: Մեղաւոր եմ Տէ՛ր, մեղայ. մեղա-  
ւոր եմ, Տէ՛ր: Մարիա՛մ Աստուածածին,  
Բրիստոս զաւկիդ սիրտին, օգնէ ինծի. կը  
պաղատիմ, կուլամ, ա՛ն հոգիս տար զաւ-  
կիս մօտ: Հրեշտակներ, զո՛ւք հրեշտակ-  
ներ, եկէ՛ք, եկէ՛ք, հոգիս զուրպան ձեզի,  
տարէ՛ք զաւկիս մօտ, տարէ՛ք ինծի, տա՛-  
րէք: Անմե՛ղ հրեշտակս, արդա՛ր եաղբուս,  
երկինքի մէջ դուն ալ աղօթէ ինծի հա-  
մար որ չուտ մեռնիմ: Ա՛խ, ի՞նչպէս չմե-  
ռայ քեզի հետ:

Պահ մը չի լսուի ձայնը. արցունքնե-  
րը կը սրբէ, իր ցրբուն մագերը կը շակէ,  
զլուխը երկու ձեռքերուն մէջ առած գե-  
տին կը խոնարհի, եւ կը սկսի զրեթէ ան-  
լսելի ձայնով սրտառուչ ողբ մը մըր-  
մնջել . . . :

Աչքերս ծովադած ու ծանրացած էին  
արդէն եւ ծովուն ծփանքներն ալ ծաւա-  
լած . . . : Երկնային՝ Վերահայրողութիւն,  
ուր խորասուզուեցաւ խեղճ կինը, երկիւ-  
ղածութեամբ դարձուցի քայլերս, հատած  
ու լմնցած, եւ ամբողջ հոգեովս գոչեցի  
յուշիկ:

— Ծո՛վ, դուն ո՞վ պապերուս փառ-  
քին ու վշտին յառիտեան վկայ, լպրի-  
ծուն ալիք-էջերուդ վրայ սա՛ ծովափիդ  
աղօթողուհիին բառերն ալ արձանագրէ . . . :

ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԵՄԵԱՆ

Բաղեշ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԼՍԵԼ ԵՒ ԿԱՏԱՐԵԼ

Եւ նա պատասխան տալով քսաւ անոնց.  
Իմ մայրս եւ իմ եղբայրներս ասոնք  
են որ Աստուծոյ խօսքը կը լսեն եւ  
կը կատարեն զայն : (Դուկ. Ը. 21)

Երկնաւոր Վարդապետը Փարիսեցի Սի-  
մոնին տունը մեղաւոր կնոջ կողմէ օժտե-  
լէն հտըք, Հրէաստանի մէջ « քաղաքէ  
քաղաք եւ գիւղէ գիւղ » տաճաներկու ա-  
ռաքեալներն ալ քովն առած կը պտտէր,  
ու Աստուծոյ թաղաւորութիւնը կը քարո-  
ղէր: Երբ ահաւ իր շուրջը մեծ բազմու-  
թեան մը հաճաքութիւն, բացաւ իր բերանը,  
այն մշտաբուռ աղբիւրը կենսատու խօս-  
քերու, ու խօսեցաւ Սերմանացանի Ա-  
ռակը, որ ճիշտ միջավայրէն տոնուած ու  
ամենէն յարմար ունկնդիրներու կը խօս-  
ուէր: Որովհետեւ Պաղեստինի այդ գիւ-  
ղացի ժողովուրդին համար ամենէն հա-  
կանալի մէկ պատկերն էր այդ իրենց վե-  
րաբերումին՝ հանդէպ ճշմարտութեան սեր-  
մին, Աստուծոյ խօսքին: Յիսուս հիանալի  
յստակութեամբ մը ցայտեցուց ճշմարտու-  
թիւնը եւ պարզեց այդ ոսկի առակին ու-  
գին, երբ յետոյ ցուցուց թէ ճամբուն վրայ  
իյնողները անոնք են՝ որ Աստուծոյ խօսքը  
կը լսեն բայց յետոյ սատանան կուգայ ու  
կը հանէ անոնց սիրտէն. թէ տպառածի  
վրայ իյնողներն անոնք են, որ երբ կը  
լսեն, ուրախութեամբ կ'ընդունին խօսքը՝  
բայց արմատ չունին, ժամանակ մը կը  
հաւատան եւ փորձութեան ատեն կը հե-  
ռանան. թէ փուշերուն մէջ ինկածներն  
անոնք են՝ որ կը լսեն բայց հոգեբով եւ  
հարստութեամբ եւ այս կեանքի ցանկու-  
թիւններով զբաղած՝ կը խեղդուին ու ան-  
պառուղ կ'ըլլան. թէ, վերջապէս, աղէկ  
հոգի վրայ ինկածներն անոնք են՝ որ խօսքը  
կ'ընդունին բարի եւ յօժար սիրտով ու  
պառուղ կուտան համբերութեամբ: Աշտա-  
նակի վրայ դրուած ճրագի օրինակով ալ  
հասկցնել կ'ուզէր թէ վերջապէս յայտնի  
են, չին կրնար ծածկուիլ անոնք՝ որ Աս-  
տուծոյ խօսքերը ունին իրենց կեանքին  
առաջնորդ, ու երկնային շնորհներու լուսը

կը ցոյայ անոնցմէ: Եւ երբ անոր ըսին թէ « Մայրդ ու եղբայրներդ դուրսը կեցած են ու կ'ուզեն տեսնել զքեզ », ան խմաստով աւելի բարձր ու աւելի ընդարձակ եղբայրութեան մը դարձուց իր նշանակիրներուն ուշադրութիւնը՝ ըսելով . « Իմ մայրս ու եղբայրներս ասոնք են որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու կը կատարեն զայն » : Եւ արդէն լսելու եւ կատարելու այս եղբայրացութիւնը ինքնաբերաբար կուգար Սերմանացանի ոսկի առակէն : Քիչ մը պարզենք ուրեմն , ամէն Քրիստոնեայի համար կարեւոր այս երկու կէտերը եւ անոր արդիւնքը :

Ա. Լսել . Արդէն առաքեալն ալ կ'ընդունի թէ հաւատաքը լսելէն է , եւ ոչ ոք կը տարակուսի այս ճշմարտութեան : Մարդիկ տառնց ճշմարտութիւնը եւ կենաց խօսքերը լսելու չեն կրնար հաւատալ , ու իրենց հաւատքին իրր զործնականացումը չեն կրնար բարձրանալ ու ազնուանալ : Արդէն Քրիստոնեայ Եկեղեցիներուն բնմը, Աւետարանի քարոզութիւնը ուրիշ նպատակի համար չէ , բայց միայն մարդոց լսելու զիւրութիւն տալու համար . եւ Քրիստոնէութիւնը , որ բոլոր աշխարհ իր մէջ բովանդակելու չափ մեծ կրօնք մըն է , առաքելութիւններ կը զբիւրէ մինչեւ աշխարհիս ծայրերը , մինչեւ կռապաշտական խառնարներու խորքերը , այն անդի անմահ հոգիներուն ալ պատեհութիւն տալու համար որ լսեն : Բայց ո՞րչափ բազմաառիւծ են մարդոց շարժառիթները՝ լսելու մէջ : Կան մարդիկ , որոնց համար լսելը մեքենական սովորութիւն մ'է , իրենց ականջը հաճեցնելու համար կարծես լսել կ'ուզեն : Աստուծոյ խօսքը մտիկ կ'ընեն , միմիայն սովորութիւն մը յարգած ըլլալու համար : Կան որ պարզապէս ժամանցի համար լսել կ'ուզեն . եկեղեցի կուզան , քարոզ մտիկ կ'ընեն , որովհետեւ անլեւա ժամանց մըն է : Կան մարդիկ ալ , որ ցոյցի համար կ'ընեն . կ'ընեն ուշադրութեամբ մը լարուած մտիկ կ'ընեն կենաց խօսքերուն , որ ուրիշներուն հոգեւոր բաները սիրող ու անոնցմով խակապէս հետաքրքրուողի գաղափարը ներշնչեն : Կան ուրիշներ ալ , որ քննա-

դատելու , մինչեւ իսկ խճրճելու համար լսել կ'ուզեն , ուրիշներ ծաղրելու համար մտիկ ընել կ'ուզեն : Եւ ինչո՞ւ յոգնիլ , որովհետեւ Մեծ Ուսուրիչը Սերմանացանի առակին մէջ զեղեցիկ կերպով կը պատկերացնէ Աստուծոյ խօսքը մտիկ ընողներու անասկները , ի լոյս հանելով անոնց ներքինը , անոնց հոգեւորանքիւնը : Բայց պէտք չէ մոռնալ թէ կան նաեւ մտիկ ընողներ , լսողներ , որոնց համար հոգեկան անունդ է Աստուծոյ խօսքը լսել , անով կ'ապրին հոգեւորապէս , եւ փրկչական յայտարարութեան համեմատ ասոնք են բուն լսողները , արդիւնք բերողները :

Բ. Կատարել . Ամէնքս ալ զիտենք թէ լսելը , միայն լսելու համար , իր նպատակին չի ծառայեր . կայ լսելուն բուն նպատակը , կատարելը : Եւ դժուար չէ տեսնել թէ այս՝ մեր շարժառիթներէն կախում ունի : Ի՞նչ շարժառիթով որ մտիկ կ'ընենք ճշմարտութեան խօսքը , այն արդէն կը դրոշմուի մեր գործերուն , մեր վարմունքին վրայ : Բայց կատարելու համար կարեւոր է նաեւ հաւատքը : Մարդ եթէ չի հաւատար իր լսածին , բնականաբար զայն կատարելու չաշխատի : Եթէ հաւատք չունինք բժիշկի մը խօսքերուն , չենք գործադրեր անոր տուած հրահանգները , ոչ ալ անոր տուած դեղերը : Հետեւաբար բուն լսելն է աննախապաշար միտքով մտիկ ընել , ու յետոյ հաւատալ , ու այն ատեն իբր բնական արդիւնք պիտի գայ կատարելը : Դժբաղդաբար մարդոց ամենէն տկար կողմը հոս է . անոնք լսելու չեն դժուարի յաճախ , ու իրենց հաւատքն ալ յայտարարելու չեն քաշուիր , բայց կատարելու մէջ թերանալու տկարութիւնը կ'ունենան : Բայց ուրիշ ճար չկայ . եթէ կը հաւատանք բժիշկի մը ասուած դեղերուն ազդեցութեան , պէտք է գործածենք զայն , պէտք է մեր արեան խառնինք զայն : Եթէ կը հաւատանք Աստուծոյ խօսքերուն ճշմարտութեան՝ պէտք է մեր կեանքերուն մէջ գործնականացնենք զայն : Քրիստոնեայ Եկեղեցին եթէ այնչափ կատարող ունենար իր մէջ , որչափ լսող ու խօսող , քսան զարու իր այս զարգացումին քսան

ՍԻՒՆԵԱՑ ԴՊՐՈՑԸ

Ը. (1)

ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ

հազար անգամը դարգացում ու բարգաւաճում պիտի ունենար : Եւ արդէն քիչ ալ չեն մարդիկը կատարելէ արդիւող փորձութիւններ : Յիսուս կը ցուցնէ թէ շատեր չեն կատարեր, որովհետեւ անոնց սիրտերը աշխարհային ճամբորդ կիրքերով ու սոնչանքներով յաճախ առաթուր կարծրացած ճամբաներ են : Աստուծոյ խօսքը հոն ընդունելութիւն իսկ չի գտնուիր : Շատերու ժայռացած սիրտերուն մէջ հազիւ ափ մը հող կայ ճշմարտութեան սերմին համար, զոր չեն կրնար երկար ատեն սնուցանել : Ուրիշներ կը խեղդեն զայն իրենց աշխարհային ցանկութիւններուն, փոշերուն եւ տառապանքներուն մէջ : Արդասարկ հող ունեցող սիրտերու մէջ կ'արդիւնաբերուի Աստուծոյ խօսքը. հոն է որ բուսնելով հարեալապարիկ պտուղ կուտայ, կամ ուրիշ խօսքով՝ կը կատարուի :

Գ. Արդիւնքը : Ուրիշն ի՞նչ է արդիւնքը երբ կը շեւնա ու կը կատարեն : — Քրիստոսի հետ եղբայրութիւն : Այս մեծ շնորհքը, վարձատրութիւնը խոստացողը ինքը, Յիսուսն է : Ամէն անոնք որ հաւատացեալի հոգեկան հոլորդ ունին իրենց սիրտերուն մէջ, զ'սոն թէ ի՞նչ մեծ երանութիւն է այս եղբայրութիւնը : Ո՞վ պիտի չուզէր այսպիսի մեծ իտէպով մը եղբայրանալ, ո՞վ պիտի չբաղձար այս ազնիւ նկարագրով եղբայրանալ : Ո՞վ պիտի չփախաքէր իր կեանքը այս բարձր նշանակեալին ուղղել : Եւ այն ատեն միայն պիտի յաջողէր արեւելեակն եղբայրութիւնը, որովհետեւ Յիսուսի հետ եղբայրացող բոլոր անհատներ իրարու հետ արդէն եղբայրացած պիտի ըլլային : Եւ յայտնի է թէ հո՞ս է քրիստոնէական եղբայրութեան մեծութիւնն ու զօրութիւնը : որովհետեւ քրիստոնէական եղբայրութիւնը իրեն իբր զաղափարական ունի Քրիստոսի եղբայրութիւնը : Ա՛յս, այն վսեմ եղբայրութիւնը, մարդուն աստուածայնացումը, մարդուն զէպ իր երկնաւոր Հայրը բարձրացումը, ահա ասոր համար կան բոլոր կրօնքները, ու կրօնքներու կրօնքը — Քրիստոնէութիւնը :

Ընթերցող, պահ մը խորհէ թէ ի՞նչ շարժանքներով կը լսես Աստուծոյ խօսքը, թէ կատարելու պաղարկութիւնդ ո՞րչափ է, եւ վերջապէս, նախաճաշակը, տաճարացեալն ասո՞՞ք եւ Քրիստոսի հետ եղբայրանալու անպատում ուրախութեան երանի՞ թէ :

ԳՐԻԳՈՐԻՍ

Վեցերորդ դարում Սիւնեաց վարդապետարանի նշանաւորագոյն աշակերտն է Պետրոս, որ Սիւնեաց աթոռին եպիսկոպոս ձեռնադրուած է Ներսէս Բ. Կաթողիկոսէն Օրբէլեան լատմիչ մեծ գովեստով կը խօսի անոր մասին, փիլիսոփոս, ֆերքող, հոգեւոր եւ քաղաքական անուանելով զանի : Պետրոս եպիսկոպոսի կ'ընծայուին բազում թարգմանութիւններ, ճառեր, Հին եւ Նոր Կտակարաններու մեկնութիւններ, պատմական գրութեք մը եւ Վատակի հօր՝ Բարիկ Սիւնեցւոյ վրայ ներքողական մը : Այս գործերէն, սակայն, մեզի հասած են միայն հետեւեալները. — 1. Համառօտ ներբողեան մը Ս. Աստուածածնի վրայ, 2. Քրիստոսի Միակեան վրայ գրուած ճառին մէկ հատուածը, 3. Վաչագան արքայի հարցումներու պատասխաններն ընդհանրապէս Մարգեղոսիւնի Խորհուրդին վերաբերմամբ, եւ 4. Բարիկ Սիւնեոյ ընդդէմ Հոնանդուր Հոնին մենամարտութեան պատմութիւնը :

Պետրոսի ծննդեան վայրն ու թուականը, ինչպէս նաեւ ծնողաց անունը դժբախտաբար անծանօթ կը մնան Պատմութեան, որ նաեւ բոլորովին լուռ կ'անցնի անոր կեանքի առաջին տարիներուն մասին : Օրբէլեան ժամանակագրական սխալումով մը կ'ըսէ թէ՝ Նդիկի, Կորիւնի եւ ուրիշներու հետ Պետրոս է գայած Կոստանդնուպոլիս, եւ միանգամայն անոր անցեալէն կը ծանոթացնէ Մովսէս քերթողահօր աշակերտած ըլլալն :

Նդիկ եւ իր աշխատակիցն Յովսէփ Պաղնացի իրենց զորք՝ սուսակապաւանց ունանց զրդոխ թուղթերէն ստիպուած՝ կիսատ կը թողուն, եւ Նդիկայէն կ'երթան Բիւզանդիոն ըստ Խորենացւոյ «յաւուրս Մաքսիմիանոսի եպիսկոպոսին Բիւզանդիոյ» (431-434). իսկ Հ. Չամչեան տ-

(1) Շար. 43րդ Թիւն :

նոնց Բիւզանդիոնն երթը կը գնէ 426ին. երկու թուականներէն ո՛րն ալ ըլլայ Եգնիկի եւ անոր ընկերներուն Կ. Պոլիս երթալու թուականը, Պետրոս տակաւին աշխարհ իսկ հկած չի կրնար ըլլալ ա՛յն աւետն. ապա ուրեմն ի՞նչպէս ընկերացած կ'ըլլայ այդ վարդապետներուն Պետրոս քերթող կրնայ դոյցած ըլլալ Կ. Պոլիս. ատոր չենք կրնար ընդգիմաքանել. բայց հաւանականաբար Զ. դարու տաճին քառորդի վերջերն ուրիշներու հետ, որոնց անուններուն անձանօթ մնալէն Օրբէլեան օգուտ քաղելով՝ ուղած է Պետրոսն ընկերացնել իր գրչին տակ Նշնիկի, Կորինի, Մամբրէի եւ ասոնց ընկերներուն, ասոնց ուշադրութիւն գործնելու ժամանակադրական բացարձակ անյարմարութեան. ճիշդ այս կարգի սխալման մը յայտնի արդիւնքն է նաեւ Պետրոսին Մովսէս Խորենացւոյ աշակերտը համարուին Օրբէլեանի կողմէ. վասն զի Պետրոս ձեռնադրուած է Ներսէս Բ. Կաթողիկոսէն, որ ըստ ուղիղ ժամանակագրութեան 545 թուականին նստաւ Հայրապետական աթոռը. եթէ Պետրոս ձեռնադրուեցաւ կաթողիկոսի տաճին կամ երկրորդ տառւոյն, եւ 45 կամ 50 տարեկան հասակի մէջ էր, ըսել է թէ հազիւ ծնած էր Զ. դարու յ սկիզբները. հետեւաբար ի՞նչպէս աշակերտած կ'ըլլայ Մովսէս Խորենացւոյն, որ արդէն հինգերորդին վերջերը խեղդամահ կըլած էր եւ միփորոնով:

Պետրոսի գրած Ս. Աստուածածնի Ներբողեանն իր համաոգութեան մէջ իսկ կ'արժեցնէ հեղինակը Քերթող անունին, պարունակելով ճարտասանական ձեւեր ու գեղեցիկ ասացուածքներ, եւ միանգամայն պատկերացնելով հեղինակին հոգեւէր խանդն ու եռանդը: Մեր Արմաշու Դպրեւանքի ձեռագիր մատենանին մէջ, որ կը պտրունակէ աստուածարան վարդապետներու ճառեր եւ ներբողեաններ, Պետրոսի գրածը հետեւեալ վերնագիրն ունի. «Եւրանելոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի զովեւս ի Սուրբ Աստուածածինն եւ ի միշտ կոյսն Մարիամ, ըստ յորջորջման նորին, եւ ի Սուրբ Դրոց լուծմունք նորին

հոգեւոր իմաստիւք(1)»: Իսկ սկզբնաւորութիւնն այս է. «Բազմութիւնք քրիստոսոսէր ժողովոյս արարէք զօրս զայս տօն նորասքանչ ուրախութեամբ եւ քերկրեացուք ի սմա մեծահրաշ ցնծութեամբ»: Ներբողեանին մէջ հեղինակն հակիրճ բայց գեղեցիկ կերպով մեկնած է Ս. Կուսին սեղգուած քանն եւ չորս նմանութիւնները, զորս կը տեսնենք նաեւ Շարակունին մէջ, եւ են՝ յրախս աստուածասունկ, այգի վայելուչ, մորեկնի անկիզկի, եւն. եւն. Իր այս մեկնութեամբ Պետրոս քերթող արդարեւ ցոյց կուտայ Ս. Գիրքի մանաւանդ մարգարէութեանց մասին ունեցած խոր հմտութիւնը:

Պաշով Ներբողեանի ոճին ու լեզուին, շարադրութիւնը զուտ հայական գրողի կրկնէհետի է խնդիր եւ խնդրառներու իրարմէ հեռաւորութեան եւ յոշական նախամասնիկներով (յար, վեր, տար,) կազմուած բառերու զոյգութեան պատճառաւ, թէեւ ըստ բառականի ոճը սահուն է եւ չաւնի խրթնարանութիւններ:

Պետրոսի գործերէն ունինք նաեւ աշքի առջիւ Բարիկ Սիւնեոյ ընդգէմ Հոնանդուրի մեծամարտութեան պատմութիւնը, զոր քաղուածօրէն տաւած է Մովսէս Կազանկայտուացի իր Պատմութեան մէջ. երկու քաջերը մեծամարտելով ասուստէն մինչեւ ժամն ինը, ուր ուրեմն քաջն Բարիկ յաղթող կը հանգիստնայ իր միտաւոր սուրովը սատակելով մարդախոշոշ պաշանն Հոնանդուր Բարիկ իր այս քաջութեան շնորհիւ Պարսից Շապուհ արքայէն պատուուելով կը դառնայ իր աշխարհը Պարսից թագաւորն՝ «սայ վճիռ թագաւորութեան կնքեալ վարազագիր(2)» մատպն:

(1) Ս. Էջմիածնի Մատենադարանի գրչագիրը (Ծիւ 915) ունի «Եւրանելոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի ասացեալ զովեւս յամենասուրբ Աստուածածին կոյսն Մարիամ եւ ի հոռետեմիւն անուան նորոս»: Ուրիշ գրչագիր մ'ալ (Ծիւ 917) վերջի բառերուն տեղ տնի ըստ յորջորջման նորին եւ ի Սուրբ Դրոց լուծմունք նորին հոգեւոր իմաստիւք:

(2) Զանազան կարծիքներու մէջ հաւանականագոյնն է Ծիւ ի հոռումն սովորեմիւն էր գործածել իբր կնիք՝ մատանիներ յատկանիշ բանդակով մը եւ իրանեան Թողաւորներու կնքանշանն էր վարագր:

հաւ., եւ ասէ ցնտ (քրտարիկ) թէ մեծ քի-  
նոյս յանդուռն արասցեն՝ մեծագոյն խոստ-  
մանց հասանիցիս» (Մով. Կալանկ. էջ 209):

Պետրոս Սիւնեցւոյ միւս գործերն աչ-  
քի առաջ չունենալնուս համար, պիտի  
չկրնանք դատաստան մը ընել անոնց մա-  
սին, բայց կը կարծենք թէ արդէն բաւա-  
կան են Աստուածածնի Ներքողեանն եւ  
Բարիկ Սիւնեոյ քաջութեան պատմու-  
թիւնը՝ նոյն հեղինակին համաթիւնն ու  
արժէքը եւ քերթողական հանճարն իմա-  
նալու համար:

Պետրոսի ամենամեծ աշխատութիւննե-  
րէն մէկն ալ եղած է Տոմարի նորոգու-  
թեան գործին մէջ ունեցած մասնակցու-  
թիւնը: Այս Տոմարի նորոգութիւնը որ  
Բրիտանոսի 551 թուականին եղաւ, ընդ-  
հանրապէս Պատմիչներէն կը վերագրուի  
Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսին. բայց  
ըստ ճշգրիտ ժամանակագրութեան, 551ին  
հայրապետական Աթոռին վրայ կը գտնուի  
Ներսէս Բ. Կաթողիկոս:

Այն ձեռագիր օրինակն որ կը գտնուի  
մեր Արմաշու Դպրեվանքի Մատենադարա-  
նում եւ ունի սա՝ վերնագիրը՝ «Ուխտ  
միաբանութեան Հայոց աշխարհիս ի ձեռն  
Հայոց կաթողիկոսի եւ Ներչապու Մա-  
միկոնէից եպիսկոպոսի եւ Պետրոսի Սիւն-  
եաց եպիսկոպոսի լան», կը տեղեկացնէ  
մեզի թէ արքայից արքայ Խոսրովու  
խան եւ չորրորդ տարին ողորմեան կի-  
րակիին ժողով գումարած են եպիսկոպոս-  
ները, նախագահութեամբ Ներսէս կաթո-  
ղիկոսի, եւ պատրաստած են Ուխտագիրը  
Խոսրով հասած է իր գահը 531ին, 24  
տարիներ աւելցնելով կը հասնինք 555ին,  
ըսել է այս թուականին տեղի ունեցաւ  
Ներսէս կաթողիկոսի գումարած Ժողովոյ  
հիստոր. Արգ. Մովսէս Եղիվարդեցի որ  
Ներսէսէն վերջը կուգայ, ի՞նչպէս 551  
թուին կաթողիկոս եղած կ'ըլլայ. Իրա-  
ւունք չունինք Տոմարի նորոգութեան  
գործը Ներսէսէն խլելով ուրիշի մը առ-  
լու. այս մասին ստուգապատում է Ստե-  
փանոս Ասողկ պատմիչ, որ Ներսէսի օ-  
րով կը դնէ Դուինի Ժողովը, ուր Ժողո-  
վականաց զխառնորներն էին Պետրոս Սիւ-

նեցի եւ Ներչապուհ Տարօնեցի եպիսկո-  
պոսները Բաց ասպի կ'արժէ նկատի առ-  
նուլ որ եթէ երբեք Մովսէսի օրով կա-  
տարուած ըլլար Տոմարի կարգադրութիւնը,  
Պետրոս Սիւնեցի պիտի չուզէր երբեք  
մասնակցիլ, քանի որ ինքը չէր ուզեր իսկ  
Սիւնեցւոց ձեռնադրութիւն առնուլն Մով-  
սէսէն, Հայոց հայրապետութիւնն երկու-  
քի բաժնուած նկատելով, Յունաց եւ  
Պարսից բաժիններուն մէջ, Մովսէս եւ  
Յովհաննէս երկու կաթողիկոսներու գո-  
յութեամբը:

Պետրոսի նման հմուտ եպիսկոպոսի մը  
այդ Ժողովին մէջ ներկայութիւնը, զոր կը  
յիշեն բոլոր Պատմիչները, մեծապէս սա-  
տարած է Ներսէս Բ. Կաթողիկոսին ձեռ-  
նարկած կարեւոր գործին, եւ Տոմարի  
ուղղութեան աշխատանքին մէջ լայն բա-  
ժինն ունեցած է իր բարձր կարողութեամբ  
եւ համբաւեալ կարողութեամբ:

Պետրոս Սիւնեցի ներկայ գտնուած է  
նաեւ Ներսէս Բ. Կաթողիկոսի օրով 555  
թուին գումարուած Ժողովին, ուր խմբա-  
գրուեցաւ Հայոց միաբանութեան ուխտա-  
գիրը: Այնքան ընդարձակ չէ այս գիրը,  
որուն մէջ նախ Նիստորականներու չար  
ու պիղծ արարքներն յառաջ բերուած են  
եւ ի վերջոյ աւելցուած է. «Իսկ մեր ոչ  
կարացեալ համբերել այսպիսի չար գործոց  
նոցա համարէն ամենեքեան արարաք  
զգիշտ զայս ուխտի եւ հաստատութեան  
ամենեցուն կամոց յաւժարութեամբ առա-  
ջի Տեառն մերոյ Յիսուսի Բրիտանոսի Աս-  
տուծոյ մերոյ»: Այս թուղթին կցուած է  
նամակ մը Ներսէս կաթողիկոսէն, Մամի-  
կոնեանց Ներչապուհ եւ Սիւնեաց Պետրոս  
եպիսկոպոսներէն՝ ուղղեալ Մարդպետա-  
կան եւ Արծրունեաց երկու Գրիգոր ե-  
պիսկոպոսներուն, զորս կը զգուշացնեն  
Նիստորականներէ, յայտնելով իրենց որո-  
շումը՝ այն է չընել անոնց հետ ո՛չ ազօթք,  
ո՛չ խնամութիւն, ո՛չ բարեկամութիւն,  
այլ մի միայն «վաճառել ինչ եւ կամ գնել,  
որպէս ի Հրէից եւ յայլ ազգաց»:

Պետրոս Սիւնեցւոյ վրայ խօսուած ա-  
տեն կարելի չէ մոռնալ այն կարեւոր եւ  
ըստ ինքեան ուշագրաւ պարագան, որ կը

ցուցանէ Սիւնեաց Մեարապօլսին նկարագիրը՝ վարչական գործերու եւ վճռական վայրկեաններու առջեւ կտրուկ ընթացք մը ունենալու մասին: Յունաց եւ Պարսից բաժնիներուն մէջ հակառակութիւն ծագելով, Ներսէս Բ. ի վախճանումէն յետոյ երկու կաթողիկոսներ կ'ան, մէկը Մովսէս որ «նստաւ յաթոս Սրբոյն Գրիգորի Ի Դուին», եւ միւրը Յովնան որ «ի Թէոզուպոլիս եղեւ. կաթողիկոս եւ եկեալ եղաթոռ ի Կոստան յԱրամօսս զիւզ»: Երկու տարբեր ազգաց բաժնիներուն մէջ Հայոց կաթողիկոսութեան բաժանումն Ստեփանոս Օրբէլեանէն զատ յիշուած է նաեւ Անանիա Նարեկացիէն (Ժ. դար) իր հաւատարմաց գործին մէջ, որուն ձեռագիր օրինակը կը պահուի Արմաշու Դպրեւանքը: Պետրոս կաթողիկոս Սիւնեաց իր ծերութեան օրերուն տեսնելով հայրապետական երկու աթոռներու միջեւ տիրող խուլ հակառակութիւնը, զոր անշուշտ կը սնուցանէին Մովսէս եւ Յովնան, եւ մօտալուա համարելով Ս. Գրիգորի Աթոռին քայքայումը, հաստատամօրէն եւ վճռաբար կը հրամայէ որ իր յաջորդ Սիւնեաց եպիսկոպոսները ո՛չ մէկէն եւ ո՛չ միւսէն առնուն ձեռնադրութիւն եւ միւսոն, մինչեւ որ երկու Աթոռները միանան վերստին: Սիւնեցիք գործադրեցին Պետրոսի այս բացարձակ կամբը՝ Ս. Միւռոնն ու ձեռնադրութիւնն առնելով Աղուանդրէն, մինչեւ որ Աբրահամ կաթողիկոս (607) բառնալով հակառակութիւնը «Միապետեաց զհայրապետական աթոռն»:

Պետրոս կաթողիկոս ամբողջ տասն աւարի պաշտօնավարելով Սիւնեաց Աթոռին վրայ արժանաւորապէս, կը վախճանի 560 թուականին, իր հոգեւոր ծնողին՝ Ներսէս Բ. կաթողիկոսի մահուանէն քանի մը տարի վերջը:

ԳՆԷԼ Ծ. Վ. ԴԱԼԷՄՔԵՍՐԵԱՆ

Դասըգիւղ



## ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ԲԱՐԻՔ ԵՒ ՉԱՐԻՔ

Պիտի ըսեն ի՞նչ չարիքները բազդատմամբ բարեաց, մեծ են եւ բազմաթիւ: Կը սխալին, ուշադրութեան թիրին է որ կը նուազեցնէ մեր բարիքները: Լայպնից

«Գրեթէ բոլոր չարիքները մեր երեւակայութեան մէջ միայն հիմ ունին. մեր կանխատեսութիւններն եւ մեր երկիւղներն անոնց սուր ուղքներ կը հայթայթեն: Ներկայ տառապանքը մեզ չի բուսիր որպէս թէ, եւ մենք կ'ուզենք ատտապիլ անկից զատ եւ անցեալ ժամանակին համար եւ: զաւոյրն համար: Լամբլե

«Երեւակայական չարիքներն իսկոյն իրական կը դառնան, երբ չառ խորհինք անոնց վրայ:

«Մարդիկ կ'արհամարհեն զգալ փոքր բարիքները, բայց այնպէս չեն վարուիր փոքր չարեաց համար:

«Չարեաց մեծագոյնն է նախընտրել կեանքը պատիւէն, եւ փրկել իր կեանքը ի վնաս անոր որուն համար արժան էր զոհել զայն:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բարոյականն ընկերութեան հիմն է, խարխալն է:

«Բարոյականն երկու բառերու մէջ կ'ամփոփուի, սէր եւ արդարութիւն:

«Բարոյական սկզբունքները ճշմարտութիւնն են բացարձակ:

«Բարոյականը պատարան մը ունի աւելի բարձր եւ աւելի ահեղ քան օրէնքի պատարանը: Նա կը պահանջէ որ մենք ոչ միայն չարէն խուսափինք, այլ զործենք բարին. ոչ միայն մենք առաքինի եղելով, այլ առաքինի ըլլանք:

«Բարոյականը մէկ հարուածով չ'ինուեցաւ, անկէտ կազմուեցաւ այն բոլոր փոքրիկ յաղթանակներէն զոր մարդը աւրաւ իր մէջ ունեցած անասնական բաժնին վրայ: Մարդկային խղճմտանքի պատմութիւնը՝ պատմութիւնն է տիրապետութեանց, մտքին՝ անասնութեան վրայ, բա-

նակառութեան՝ կիրքին վրայ, կամքին՝  
ցանկութեան վրայ: Դարեր առաջ ցորչափ  
ընկերութիւնը վայրենի վիճակէն կ'անցնի  
քաղաքակրթեալ վիճակին, բարոյական  
գիտակցութիւնը կ'ուճանայ, կը մեծնայ:  
Ոյժին առջեւ կ'ենէն արդարութիւնը: Իս-  
կապէս մարդկային երկու մեծ գաղափար-  
ներ, պարտականութեան եւ իրաւունքի  
գաղափարները, անստեղծական մարդուն խա-  
ւարները կը լուսաւորեն: Բարիքն եւ չա-  
րին զանազանութիւնը մարդկային ազգի  
բարձրացումը ցոյց կուտայ:

\* \* Բարոյականը մի է. վասն զի բոլոր  
մարդկային ազգի համար օրէնքներ ունի  
որ չեն կրնար բռնարարով անպատիժ:

\* \* Այսօր յայտնի է որ բարոյականը  
կրօնական գաղափարներէ անկախ կրնայ  
իր գոյութիւնը պահել, կ'ըսէ կիզօ, բայց  
անշուշտ որպէս մի երախայ ձերբազաւո-  
ւած:

\* \* Կան մարդիկ որ կտոր բրդուճ բա-  
րոյական մը ունին, ասիկայ այնպիսի կեր-  
պաս մ'է որով չէ կարելի հազուադէպ չինել:

\* \* Չիկայ առաքինութիւնն առանց զո-  
հողութեան, եւ չի կայ բարոյական առանց  
ճիշդի իւր իսկ անձին վրայ:

\* \* Բարոյական ուսուցման լուսադոյնը  
միշտ այն կենդանի մասը պիտի լինի զոր  
մենք պիտի քաղենք մեր անձէն, վասն զի  
բարոյականը կեանք մ'է:

\* \* Բարոյականը կը զտուի, ցորչափ  
գիտութիւնը կ'ընդարձակուի:

\* \* Բարի քաղաքականութիւնը չի զա-  
նազանուի իր բարի բարոյականէ:

\* \* Յարգել տրիչի իրաւունքներն եւ  
բարիք գործել մարդոց, լինիլ արդար եւ  
միանգամայն զթոտ, աւտսիկ ընկերական  
բարոյականը:

\* \* Այն բարոյականով ուր չաներ կը  
փնտռուին, մարդկային հողին կը կրօնայնէ  
իր գեղեցիկութիւնը, առաքինութիւնն իւր  
դասերը, պատմութիւնն իր օրինակները:

\* \* Նիւթական աշխարհը կը հանգչի  
հաւասարակշռութեան վրայ, բարոյական  
աշխարհը՝ ուղղութեան վրայ: Հիւլիօ

\* \* Թո՛ղ մարդիկ լաւ ի միտ առնեն  
մարդկային անձին արժէքն եւ բնութեան

նոյնութիւնն որ կայ ի մարդիկ, բարոյա-  
կանը կը տարածուի եւ կը լուսաւորուի:

\* \* Մեր բոլոր արժանապատուութիւնը  
կը կայանայ մտածութեան մէջ. աշխա-  
տինք ուրեմն լաւ մտածել. աւտսիկ բա-  
րոյականի սկզբունքը:

ԽԱՉԻՍԱՐ

## ՏԼԻՔԵՑԻ - ՄԻԻԹԷՂԱԼԻՊ - ԲՍՑԱ

Տաճարի 38րդ թիւին մէջ, Դեր. Տ.  
Սուրէն Մ. Վ. Դալէմանի կեանք եւ ար-  
ցունքը կը կարգայի: Փորձառաւոր արշ-  
խարհի մէջ. քաղաքակրթ վայրենիներու  
զիւսնապիտական դարձումքները՝ նող-  
կալի տխրութիւններով կը պաշարեն կոյս  
ու անբիծ սիրտերը, մանաւանդ կեանքի  
սկսնակ՝ սուրբ ու մաքուր սրտերը:

Անուրանալի ճշմարտութիւն մըն է  
մարդկային խղճի պերակշտութիւնը ընդ-  
հանուր աւարածներու վրայ. բնախօսօրէն  
տարբերութիւն մը չունի նա այն ամէն  
անասուններէն՝ որ օգին պարտաւորութեան  
մէջ կը թռչան, ծովուն խորերը կը լո-  
ղան եւ ցամաքի վրայ կը քայլեն:

Տեսայ զոյգ մը տաւրակներ՝ կիսապա-  
տին վրայ նստած, երբեմն ելեւէջներով  
զիրար կը կոցահարէին: Անմեղ սիրաբա-  
նութիւն մըն էր այս: Տունի ընտելացած  
անիւրեւ ճնճողներ, նախանձելով տաւ-  
րակ ամսին սիրոյ հաճոյքներուն, մէջ կը  
նետուէին ու կ'ընդհատէին անոնց քաղցր  
յարաբերութիւնները:

Զարմա՛նք: Տաւրակներն ու ճնճողե-  
կները յանկարծ սատուներով՝ վարը, բակը  
իջան ու պահուրակու ձեւով մը, նստած  
տեղերին սփեցան: Բողէի մը սաւառ-  
նումը տեսած էին: Սկսայ լուրջ մտածու-  
նելու մէջ իշխար Բաղէն իր մեծութիւնով  
թէ ծանրութիւնով, առաւելութիւն մը  
չունէր տաւրակներէն. ինչո՞ւ արդեօք  
այս վերջինները թուով ալ չատուր ըլ-  
լայով հանդերձ մէկ բազէն վախցան. ի  
հարկէ նախազգացումով եւ փորձառու-  
թիւնով գիտէին բողէին զիջակեր եւ  
պատասխիջ մը ըլլալը:

Վայրի անասուններն ու ծովուն կենդանիներն ալ միթէ այսպէս չե՞ն. թէպէտ համասեռ բայց բնութեամբ տարբեր, բուսականութիւնն անգամ այսպէս է. փշուռ ու թունաւոր բոյսերը միշտ կը վնասեն օգտակար եւ անվատու բոյսերուն: Ուրեմն չզարմանա՛ք համասեռ մարդկութեան ընթացքին, որ՝ տարբեր են բնութիւնով եւ ապրելակերպի տարբեր միջոցներ ստեղծելով: Այսպէ՛ս եղած է անցեալը, ու այսպէս է ներկան: Առիւծը, Արջը, Գայլը, Ուրուրը, Բազին եւն., եւն., Տերեւեյի — մի քեղայնայններ են բայեա տաք բակին եւ աղաւնիին, եւ քանի որ կան ու իրենց սերնդեան պոյութիւնը կը կը մնայ, միշտ պիտի ըլլան զրկանք, բնութիւն, սպանութիւն, այլովքն հանդերձ: Իսկ եթէ իրարու հանդէպ գործածեն իրենց սուր մագիլները, կոր կռուցները, ահարկու ժանիքները, թերեւս բլայ ժամանակ որ երբ զրկուին այդ վնասակար գործիքներէն, այն ատեն Աւետարանի խօսքը լրացած կ'ըլլայ. — Դայլք եւ գառի՛ք ի միասին ճարակեցին:

Ահա այն ատեն միայն կը բաժնուի արցունքը կեանքէն:

ԽԱՉԱՏՈՒՐ ՔՀ. ՊՕԼԻԿԵԱՆ

Հայեայ

## Ո՞ՒՄ ԸՆՏՐԵՍ

Ախալքալաքի ու Ծալկայի 70 հայաբնակ գիւղերը քաղաքի հեռ միասին ինձ ընտրել են պատուիրակ. որ իբրեւ իրենց՝ 80 հազար Հայ-Լուսաւորչականների՝ ներկայացուցիչ մասնակցեմ կաթողիկոսական աւագիկայ ընտրութիւններին:

Ինձ ընտրող 80 հազար ազգաբնակչութեան հաւատը չաճողորձած չլինելու համար՝ սկսեցի ուշի ուշով հետեւել մեր մամուլի բոլոր թերթերին, ու ծայրէ ի ծայր կարգալ կաթողիկոսական հարցին՝ առթիւ լոյս տեսած բոլոր յօդածները, ու եկայ այն եզրակացութեան, որ Հայ Լուսաւորչականների կաթողիկոսը պիտի լինի:

1. Երիտասարդ՝ որպէս զի չուտ չը մեռնի ու հարեւր հազարներ նստի աղւի լիւայ:

2. Փորձած՝ որպէս զի սխալներ չանէ ու ազգը տուրը տայ:

3. Վարչական՝ որպէս զի կարգ ու կանոն մացնէ «հոգեւոր իերարխիա» կոչւած «անարխիայում»:

4. Հասարակարգ՝ որպէս զի «դառու չդառնայ ու չո՛քաղը տայ ուրիշի ձեռքը»:

5. Անշահաւոր՝ որպէս զի ազգի վտարը կու չտայ:

6. Ազգաւոր՝ որպէս զի ամբողջապէս ներքեւ լինի ազգին եւ ո՛չ թէ իր ազգականներին:

7. Հեղինակաւոր՝ որպէս զի համատարած ազգի հազար զինի անդամները հաւատան անխոր:

8. Աւանդապահ՝ որպէս զի եկեղեցու աւանդութիւններն անաղարտ պահի:

9. Յառաջադեմ՝ որպէս զի եկեղեցին վերանորոգէ ժամանակի պահանջների համաձայն:

10. Մանկավարժ՝ որպէս զի ազգի «մանկատանը» դժուրները կարողութէ:

11. Լեզուագէտ. 12. Դիւղասնես. 13. Բաղադագէտ. 14. Տնտեսագէտ. 15. Օրինապահ. 16. Աստուածաբան... եւն., եւն.:

Մի խօսքով Հայ մամուլի կարծիքով Հայ ազգի կաթողիկոսը ամենագէտ պիտի լինի ու անսխալական Հոռոմի Պապից էլ մի բան դէնը...

Սակայն նոյն Հայ մամուլը դեռ ցայսօր չի մտադրու անուն չտեց, որի մէջ երկու հայ թերթ միասին երկու զբաղան յատկութիւն գտնէին...

Հորիզոնը մէկի զբաղան կողմն է գովում, Սուրհանդակը տասնմէկ «բացասական» կողմեր է թուում. Սուրհանդակն առաջարկում է մի ուրիշին, Մշակն է պարտաւում. Մշակի թեկնածուին Հովիսն է հայհոյում...

Ախալքալաքի ու Ծալկայի ինձ ընտրող Հայ ժողովուրդը, ախպէ՛ր, էքքան մեծ պահանջներ չունի իր ապագայ կաթողիկոսից (զույցէ մեծ մասը զիւղայններ են), չեն հասկանում մեր մամուլի ներկայա-

ցուցիչների չափ. կամ թերեւս նրանց չափ «չաճագրգռուած» չեն . . .

Յամենայն դէպս մի մարդու անուն տւէք, որ ազնիւ, խելօք ու զարգացած լինի, եւ նրան կը տամ ինձ ընտրող 80 հազար Հայ ժողովրդի ձայնը: Որովհետեւ ազնիւ մարդը չի խաբի, խելօքը՝ ձեռնհաս ու մարդու գործակիցներ կընտրի, ու զարգացածը կը կարողանայ նրանց խորհուրդները հասկանալ ու լաւն ու վատը որոշելով անօրինիւ ըստ արժանւոյն:

Թէ չէ՝ մեր մամուլի մինչեւ այժմ գըրածներէն եւս դոնէ բան չը հասկացայ, բացի այն, որ կարծես զիւզական վաշխառուների պէս ամէն մէկը ուզում է իր մարդն անցկացնել, որ ապագային հեշտութեամբ կարողանայ «նիսիաները» սաղացնել ու եղ ու մեղրի մէջ լըլըլու . . .

Իսկ ի դիմաց ինձ ընտրող 80 հազար Հայ ժողովրդի, որ ոչ մի «նիսիա» չունի քաղաքներու, աստղէք, խնդրիմ, ո՞ւր ձայն տաւ, ո՞ւր ընտրեւ:

ՋԱԽԱԿԵՑԻ(\*)

Ախուրաբ

## ՄԱՍԼՈՅ ԱՐՁԱԳԱՆԳ

ՕՐՄԱՆԵԱՆ Ա.Ի ԹԵՐ ՈՒ ԴԵՄ

Տքդ. Կ. Փաշաեան Հորիզոնի մէջ կը հրատարակէ երջանկալիչատակ Իզմիրեան Ա.Ի Թուրքիոյ մէջ Սահմանադրութիւնը հռչակուելէն շատ առաջ, 1908 Յունվար 26ին, Երուսաղէմէն իրեն ուղղած մէկ նամակը, որուն մէջ հոգեւոյս Արքայանը կը դրէ. «Ամէն ջանք եւ աշխատութիւն այն ազգանուէր նպատակին պէտք է նուիրուի որ Կ. Պոլսոյ անստապիւնը (Օրմանեան, օրման տաճկերէն անտառ է նշանակում), իր պաշտօնին եւ պարտականութեան դաւաճանելով՝ հարաւային վաղրին (Սուլթան Համիդի) շնորհընկալ հաճոյականաբար դարձողը, Ամենայն Հայոց Կաթողիկոսական ընտրելեաց ցանկէն գուրս

վտարուի, հակառակ պարագային դառնապէս պիտի զղջայ ազգն ու եկեղեցին»։ Տքդ. Փաշաեան կ'աւելցնէ թէ «Իզմիրեանի այս կարծիքը չէ կարելի վերադրել նսխանձի կամ մրցումի, որովհետեւ նախ ինքը յոյս չունէր որ Խրիմեանի նման պատի կարողանար արտոնական վիճակից ազատելով լազմիւ կաթողիկոսական դահի վրայ. երկրորդ իր այս միտքը յայտնած է բարեկամական մի պարզ նամակի մէջ»։ Տոքորը կը յարէ թէ «Օրմանեանի մասին նոյնպէս յոռիաւ էր Դիւանդ Եպ. Շիշմանեան, որը արքային էր Երուսաղէմում»։

\* Թիֆլիզի պատուիրակային Ժողովը նոյ. Յին կատարեց կաթող. պատգամաւորի ընտրութիւնը, յանձին Պ. Յովհաննէս Ստէնդիարեանի, թունդ Օրմանեանական, Հորիզոն, ընտրուած պատգամաւորին բարեկամութիւնը ճանչնալով հանդերձ, կը բողոքէ պատուիրակային Ժողովի միակողմանի ընթացքին դէմ, որով վճռած էր թէ «ընտրելիների մասին կարելի է խօսիլ, բայց միայն լաւ խօսիլ. միայն զրական վերաբերմունք ցոյց տալ դէպի թեկնածուները»։ Հորիզոն ցաւ կը յայտնէ որ նոյն ինքն Պ. Ստէնդիարեանի պէս մի «ողջամիտ» մարդ ջատագով հանդիսացաւ այդ ընթացքին «Անկարելի էր սպասել որ քսաներորդ դարում Հայ ինտէլիգենցիայի լաւագոյն ներկայացուցիչներից մէկը հրապարակի մէջ, ընտրողական ժողովում, այսպիսի մի պահանջ հանէր. — Ես պիտի փառաբանեմ իմ ուղածին, բայց դու, որ կարող ես իմ փառաբանութիւնները հերքել, իմ պաթոսը ջնջել փառաբանութիւնը, իրաւունք չունես բերանդ բաց անելու»։ Ապի կա «չառ ծանր իրողութիւն, մի տգեղ փաստ եւս» կը նկատէ Հորիզոնը։ Նոյն թիւթը կը քննադատէ նաեւ պատուիրակային Ժողովին կողմէ Յանձնաժողովի մը կազմութիւնը, «Թիւրքահայ եղբայրներին ընդունելու համար»։ Կը յիշեցնէ թէ «եղբայրներ» կոչւածները ճիշդ այն Թիւրքահայերն են, զորս քիչ ժամանակ առաջ Թիֆլիզիները կ'անուանէին «ստորաբարձ, վաճառող արարածներ, որոնք պատրաստ են փարայի համար ծախել խեղճ եւ սըր-

(\*) Արտատպուած Հորիզոնէն :

բութիւն»։ Աստիկայ կ'ըսէին՝ անոր համար որ թրքահայոց Ազգ. Ժողովը կը մերժէր կարգաւ իրենց հետագիրը՝ Օրմանեան Ս. Ի խնդիրը կարգադրելու համար Իսկ հիմա, անոնց ընդունելութեան համար յանձնաժողով կը կազմեն։ «Ո՞ւմ են ուղում խաբել այդ տխուր հերոսները. նրանց՝ Թիւրքահայ պատգամաւորները հարկաւոր են, լոկ եւ մի միայն իրբեւ ձայներ, որոնց կարելի է շահագործել յողուս եւ ի փառս նոյն Օրմանեանական պաշտամունքի։ . . . Կը խարտւին Թիւրքահայերը . . . այդ մենք կը տեսնենք . . . Օրմանեանականութիւնը թքել է Թիւրքահային դէմքին։ Այժմ պատրաստուած է համբուրել այդ թքապատ, անարգուած գէժքը»։

«Իսկ Մշակի մէջ յայտնի գրադէտ Պ. Ստ. Մալխասեանց «Թե ի՛նչպիսի դարձայ եւ Մրազան Օրմանեանի կոչակից» խորագրով յօդուածով մի կը յայտնէ թէ ինքը թունդ հակաօրմանեան մըն էր, բայց Ն. Սրբազնութեան վերջին երկատիրութիւնը՝ «Հայ Եկեղեցին» կարգաւորով տեսած է թէ նա եղած է «կրօնա-դաւանական հարցերում աւելի ազատամիտ, եւ կեղեցական-վարչական-հարցերում աւելի ժողովրդական քան կարող էի սպասել»։ Պ. Մալխասեան մէկ քանի մէջքերուններ ընելէ ետքը նոյն գործէն, սապէս կը վերջացնէ. «Այդէն հասած լինելով որոշ եզրակացութեան այն առարկութիւնների մասին որ ես ինքս անում էի կամ ուրիշների կողմից լինում էին Սրբազան Օրմանեանի կաթողիկոսական թեկնածութեան դէմ, ապա կարդալով «Հայոց Եկեղեցի» գիրքը, եւ ծանօթանալով հեղինակին սկզբունքին հետ, բողաքական ծրագրի, ինչպէս եւ զուտ կրօնական եւ եկեղեցական վարչական գործերի նկատմամբ, ես եկայ այն համոզման որ յիշեալ յատկութիւններն ունեցող անձնաւորութիւնը ամենայարմար անձն է Հայոց Հայրապետական Գահը թաղմելու համար, մեր կեանքի ներկայ պայմաններում»։

«Մոսկուայի կաթող. պատրաստուած Բժիշկ Սիմէոն Շահնազարեանի ընտրութիւնը Սինօգի կողմէ բեկանուելով նոր

ընտրութեամբ Պ. Ստ. Մալխասեանի եղած է պատգամաւոր Բժիշկ Շահնազարեան կը բողոքէ այդ բեկանման դէմ, որու առթիւ Մշակ կը քննադատէ Սինօգը թէ իր դրած կանոնը ինքը չի յարգեր. քանի որ թեմակալ առաջնորդի վճիռը անբողոքելի հռչակելով հանդերձ, կը բեկանէ անոր կողմէ հաստատուած ընտրութիւն մը։ Բայց ասիկա կ'ընէ, երբ ընտրուածը Օրմանեանական է կամ հակաօրմանեան, իոկ երբ ընտրուածը հակաօրմանեան է կամ Սուրբնեան, այդ պարագային ա՛ն էն բողոք անդիտելի կը թողու. «Կա՛մ մի հրատարակէք օրէնքներ, կամ երբ հրատարակուած էք, ինքնիրդ պահպանեցէք եւ մի՛ խախտէք» կ'եզրակացնէ Մշակ։

«Հոյիս, որ սկիզբէն ի վեր թունդ Օրմանեանական է եւ իր գրեթէ բոլոր թիւերը կը լեցնէ Օրմանեան Ս. Ի նկատմամբ եղած քննադատութեան պատասխաններով, վերջին թիւին մէջ (թիւ 44), վճռապէս կը հերքէ Ազատամարտի այն ամբաստանութիւնը թէ «Հոյիս խափանուելու վրայ է եղել, եւ Օրմանեանի ոսկիները օգնութեան հասած եւ կենդանացուցած են զայն»։ «Հոյիս Պոլսական թերթ չէ, եւ ոչ նրա խմբագրողները Պոլսի հոսնոս եւ «մեծապատիւ մուրաղկան» կամ այն շանսաժխտների խմբից որոնք իրբեւ ազատամտութեան գին, Հայ ժողովուրդին թալանեցին»։

Իրաւունք կրնայ ունենալ Հոյիս, հրաշակելով թէ «քնդունակ չէ կաշառք ուտել, թէ չաքաթ չի անցնում որ նոր բաժանորդներ չունենայ», բայց ասիկա հաստատելու համար կարծենք թէ պէտք չկար Պոլսական թերթերը «հոսնոս», «մեծապատիւ մուրաղկան», կամ «չանպաժխտ» մակդիրներով որակել։ Բարեկրթութիւնն էական պայման է լրագրական բարբերումէջ ալ։ Մեր Ռուսահայ պաշտօնակիցները երկինքէն իջած հրեշտակներ չեն վերջապէս») . . . :

(\*) Ռուսահայոց արամադրութիւնները մօտէն մանածոցնելու նպատակով, մէկ երկու թիւի մէջ քաղաքաւար կամող. խնդրոյն կը նուիրուի Մամուլայ Յեճազանցի բաժինը, որուն մէջ պիտի արձանագրուին Հայ եւ օտար միտքերու կողմէ արտայայտուած լուսոյնի զաղտիւրները՝ կրօնական, քաղաքական եւ խնայական հարցերու վրայ։

## ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ անցեալ ուրբաթի նիստը մեծ շահեկանութիւն մը չունեցաւ : Ատենական զործողութեանց միջոցին՝ վաւերացուեցաւ անցեալ շաբթուրն տրուած չորս եկեղց. երեսփոխաններէ երեքին՝ (Տ. Եղիշէ Ս. Արքեպ. Դուբան, Տ. Եղնիկ Ծ. Վ. Պապահան եւ Տ. Տրդատ ք. Պոյաճեան) պաշտօնը, իսկ չորրորդին՝ Անանիա Վ. Հազարապետեանի (որուն ընտրութիւնը կը մերժէ Վարչութիւնը՝ իրաւամբ առարկելով թէ ո՛չ Երուսաղէմ կ'երթայ եւ ոչ ալ Պոլսոյ Պատրիարքութեան թեմերուն մէջ պաշտօն կ'ընդունի) խնդիրը նախաձեռնութեան դիւանին քննութեան յանձնուեցաւ (\*) :

Շօշափուեցան Քաղսք. Ժողովէն պակսած չորս անդամներու ընտրութեան, նաեւ Պոլսոյ եւ Երուսաղէմի Պատր. ընտրութեան խնդիրները՝ առանց լուծուելու : Այս վերջինը առիթ տուաւ բուն քննադատութիւններու : Միաբանութեան կազմած եօթնանուն եւ հոսանուն ցանկերուն եւ ամբողջ Միաբանութեան ղեմ. Յարութիւն էֆ. Շահրիկեան անդամ մ'ալ երեւան հանեց զիջարար միաբաններու դաւերը եւ հիմնական բարեկարգութեան պէտքը : «Երուսաղէմի խնդիրը Հայկական ցաւերուն ամենէն տանջողներէն մէկն է, դոչեց. մինչեւ որ օրէրաւիօն չկատարուի, չի բուժուիր : Վարչութիւն, Ազգ. Ժողով, Միաբանութեան քառասուն վիճակի մէջ են. որովհետեւ ուղիղ ճամբէն չենք երթար : Յանձնաժողովներ կը կազմուին, կը լուծուին, Երէցեանի մը անձնակազմին համար նոր յանձնաժողով. աւսոք խնդիրը հետզհետէ խճողելու միջոցներ են» : Շահրիկեան էֆ. յիշեց Միաբանութեան ըմբոստութիւնը Ազգ. Վարչութեան պատուիրակներուն դէմ :

(\*) Յուշի է որ մեր եկեղեցական Դարը պարզ ընտրական գործի մը մէջ իսկ ծայր աստիճան անգիտակցութիւն ցոյց կուտայ, ուր կարգի պաշտօնախոյս հոգեւորականի մը երեսփոխանութեան պատվէն ընծայելով : Ի յիշատակ :

«Պետական բռնի ոյժով Երուսաղէմի վանքէն զուրս հանուած, 100,000 ոսկի գողցած Միաբանութեան մը կ'ոտարարէր որ Համագումար կազմեն, Պատրիարք ընտրեն» : Պահանջեց որ նախ յանցասրնէրուն իրենց տեղը ցուցուի, մաքուր Միաբանութիւն մը կազմուի : «Երէցեան երեսփոխան չէր կրնար բլլալ, զատուարտուած էր» պօռայ, ու թախանձագին կոչ ըրաւ Ժողովին՝ մեղքնալ Ժողովուրդին որ անգամ մ'ալ 40,000 ոսկի պարտք պիտի տայ : «Վանքը կրթական օժախ մը կրնայ դառնալ. աշխարհական տարրը պէտք է ստանձնէ վարչութիւնը» : Նըպաստաւոր եւ աննպաստ ընդմիջումներու մէջ վերջացուց Շահրիկեան էֆ. եւ Ժողովը որոշեց Երուսաղէմի տեղեկագիրը զրկել Ատենապետաց Դիւանին, Կեսարիոյ առաջն. իոխանորդ Տ. Մարտիրոս քնն. Զարգարեանի՝ ի դիմաց Դաւառ. Ժողովին՝ զրկած մէկ հեռագրին հետ թէ զեղծումը ամբաստանութիւններ կան Տ. Տրդատ Եպիսկ. ի նկատմամբ : Վարչութեան Ատենապետ Ապանեան էֆ. ի առաջարկութեամբ որոշուեցաւ քննել Տ. Տրդատ Եպ. ի նըպաստ եկած զրեւն ալ : Ատենապետաց Դիւանը 15 օրէն իր պատասխանը պիտի բերէ : — Ի դիմաց Վարչութեան, Ոսկան էֆ. Մարտիրոսեան համարապետութիւնն ըրաւ կաթող. ընտրութեան եղանակին մասին Տեղակալ Ա. Էն եկած ծանօթ նպաստաւոր հեռագրին եւ դիտարանաւորէն արուած տեղեկութեանց, որմէ յետոյ Ժողովը ցրուեցաւ :

«Ազգ. Ժողովին «Ազատական» կուսակցութիւնէն բաժնուեցան դաշնակցական երեսփոխանները՝ Դաշնակցութեան վեցերորդ ընդհ. ժողովին որոշումով : Այս առթիւ մտերմական հացկերոյթ մը տրուեցաւ Շք. զիշեր Թօգաթլեանի սրահին մէջ, եւ սիրալիր ճառեր խօսուեցան :

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ. — Պայրամի առթիւ Տեղապահ Ս. ք. Կայս. Պալատ երթալով՝ միւս Հոգեւոր Պետերուն հետ ներկայացաւ Վեհ. Կայսեր, եւ Հայ Ազգին շնորհաւորութիւնները յայտնեց : Յետոյ այցելեց գահաժառանգ իշխան Եւս-

սուֆ Իզզէտարն Էֆ. Վարչապետին, Շէյխ-Իւլ-Իսլամին եւ Դատական նախարին : Իսկ միւս նախարարներուն եւ հայտնակ նահանգներու կուսակալներուն շնորհաւորագրեր ղրկուեցան— Նոյն ամսին առթիւ Տօլմա Պաղէի Կոյս. Պալատան մէջ կատարուած շնորհաւորութեանց մասնակցելու հրաւէր չէր ղրկուած Հայ-հոռմէականաց Պատրիարքարանը, որովհետեւ կառավարութիւնը չէ ընդունած Թէրզեանի կարգած փոխանորդին պաշտօնը :

\*. Տեղապահ Ս. Բշ. օր ուսու գետպան Մ. Զարիքօֆի այցելեց, ընկերակցութեամբ ֆրանսերէնի քարտուղար Յ. Ալիբար Էֆ. եւ շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորներու խնդրոյն առթիւ ցոյց տուած բարեացակամութեանը համար, ու խնդրեց որ այդ վերաբերումը շարունակէ, նոր հրահանգ մը տալով հիւպատոսներուն որպէս զի Եկեղց. պատգամաւորներուն անցադրերն անմիջապէս յանձնեն :

Ուշագրաւ է դեսպանին պատասխանին հետեւեալ հատուածը. — «Հայերը ցորչաւի հաւատարիմ կը մնան իրենց հայրապետական Աթոռին եւ իրենց Եկեղեցւոյն, կրնան վստահ ըլլալ Ռուսիոյ պաշտպանութեան վրայ. որովհետեւ Ռուս կառավարութեան հաւնդումն այն է որ իր Եկեղեցին եւ Կոնսթ. սիրողը իր վեհապետն ալ կը սիրեն : Տեղապահ Ս. Բ. բացատրեց թէ Հայերը ինչ միտ զոհողութիւններ ըրած են իրենց Եկեղեցւոյն համար. իսկ հայրապետական Գահուն նուիրականութեան վրայ իրենց խորունկ համոզումին իբրեւ ապացոյց մէջ բերաւ այն ընդհանուր վրդովումը որուն ենթարկուեցաւ Թրքահայ ժողովուրդը, լսելով այն զրոյցը թէ իր մասնակցութեան իրաւունքը զեղչուած է : Տեղապահ Ս. Բ. ի վերջոյ յայտնեց իր 17 տարի Ռուսիա բնակութիւնը, եւ շեշտեց Ռուսահայոց հաւատարմութիւնը՝ ուսական Գահուն : Գոհ տպաւորութեան տակ մեկնեցաւ Ն. Սըրբազմութիւնը :

\*. Ռուս դեսպանը Դշ. օր փոխադարձ այցելութեան եկաւ Ազգ. Պատրիարքա-

րան : Շնորհակալութիւն յայտնեց Ազգ. Ժողովին իր մասին արտայայտած զգացման եւ Տեղապահ Ս. Բ. յայցելութեան համար : Սիրալիր տեսակցութենէ մը ետք, որու միջոցին Տեղապահ Ս. Բ. տեղեկութիւններ սուս Ազգ. Պատրիարքարանի կազմակերպութեան, Կաթող. պատգամաւորներու ընտրութեան եւն. վրայ, դեսպանը մեկնեցաւ վայելուչ պատուասիրութիւններու առարկայ դարձած :

ԿիւլիկիՅ օրրանոցներուն մասակարարութիւնը յառաջիկայ տարի դժուարութեան պիտի բաղխի, նոյն իսկ կառավարական 10,000 ոսկի նպաստն եթէ ստացուի. որովհետեւ այդ գումարէն Որբախնամին բաժինը 4800 ոսկի է միայն (միւս կէսը Այրիւննամին կը վերաբերի), մինչդեռ 7000 ոսկիի պէտք կայ Մնացեալ 2200 ոսկին հայկաթելու համար կը խորհուր վիճակահանութիւն մը կազմակերպել, ընդարձակ սահմանի մը մէջ, եւ նուիրուած առարկաներու վրայ :

ՍՄԵՐԻԿԱ. ՀՍՅՈՑ Ազգ. Ժողովը կաթող. ընտրութեան եկեղց. պատգամաւոր ընտրել է Էջմիածնի կաթող. Տեղակալ Տ. Գէորգ Արքեպ. Սուրենեանցը, իսկ աշխարհական պատգամաւոր՝ Տիար Մաղաք Գ. Պէրպէրեան : Այս որոշումը հետագրուած է Էջմիածին : Միւս կողմէ Տ. Պողոս վրդ. Գաֆթանեան իր առաջն. փոխանորդութեան հանգամանքին վրայ պնդելով կը մերժէ Ժողովին իրաւունքները ի մասին պատգամաւորի ընտրութեան, եւ իր կողմէ ընտրութիւններ կատարել կուտայ գաղութներուն, որոնց մասնակցիլ կը մերժեն, ըստ Ազգի, թեմերու բոլոր Հոգաբարձութիւնները՝ Գաֆթանեան Վ. փոխանորդութիւնը չճանչնալով եւ ընդունելով պատգամաւորներու ընտրութեան համար Երեսփ. Ժողովին իրաւասութիւնը, որ ընդունուած է Կ. Պոլսոյ եւ Թրքահայ բոլոր վիճակներու մէջ : Ամերիկահայոց Կաթող. ընտրելին է Տ. Նդիշէ Արքեպ. Դուրեան :

ԿԱԹՈՂ. ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՈՒ առաջին խումբ մը՝ Դշ. օր մեկնեցաւ Կ. Պոլսէն, վիզի եւ այլ զօրծողութիւններէ ա-

ւարտած ըլլալով: Ասոնք են Տ. Յակոբ Աշոտ եւ Տ. Բարգէն Կիւլէսէրեան Եպիսկոպոս, Տ. Տ. Գրիգորիս Պալագեան, Մատթէոս Ինճէեան եւ Պարգեւ Վ. ներք, Տ. Տրդատ քհն. Պօյաճեան, եւ Օննիկ Զիֆթէ Սարաֆ, Հայկ Անտօնեան, Տատուրեան, Ե. Տ. Անդրէասեան, Վահան Թէքէեան, Գալֆահեան եւ Մ. Հայկազն էֆ. ներք: Ասոնց պիտի միանան Սամսոնէն Տ. Թորգոմ Եպիսկ., Սամսոնի քահանան եւ ուրիշ պատգամաւորներ՝ եթէ կան, նաեւ Տրապիզոնէն Տ. Սերովբէ Վ. Սամուէլեան, Նշան էֆ. Անդրէասեան, որով պատգամաւորաց Ա. Խուժըր 20 հոգիի չափ կ'ըլլայ: Կը յուսացուի որ վաղը (կիր.) հասնին Պաթում: Ուրիշ Խուժըր մը ճամբայ կ'ըլլէ յառաջիկայ Գշ:

ԵՐՈՒՍՍԱՆԷՄԻ Պատր. Տեղապահ Տ. Դանիէլ Եպիսկ. որ Կ. Պոլիս եկած է, յայտարարած է Վահրամ Ա. Արքեպ. Մանկունիի թէ Պատր. ընտրութիւնը կատարուելէն վերջ ալ եթէ մնար վանքին մէջ, աւելի՛ աննպաստ վիճակ յառաջ պիտի դար, ուստի թէ՛ այս աեռակէտով եւ թէ իր իր առողջութիւնը դարմանելու համար հարկադրուած էր հեռանալ:

ՍԿԻԻՏՍՈՐ, ԳՈՒԶԿՈՒՆՃՈՒԳ-ԻՃԱՍԻՆ միացեալ թաղէն պակսած մէկ երեսփոխանի (հրաժարեցողուած Միսաք Սուրեանի տեղ) կիրակի օր քուէից սատար մեծամասնութեամբ երեսփոխան ընտրուեցաւ Ոսկան էֆ. Մարտիրոսեան: Յաւալին այն է որ ընտրութիւնէն ետքը, պարտուած կողմը անազնութիւնը ունեցած է քուէտուփին վրայ յարձակելու եւ քուէները պատռելու . . . :

ՅԱՐԱՂԻՆԻ (Տիգրանակերտ) Առաջն. փոխանորդը Պատրիարքարան կը տեղեկացնէ թէ տեղւոյն հնազարեան եւ գեղակերտ երկու եկեղեցիներուն քանդումը կատարուած է տեղական կառավարութեան ուղղակի հրամանով: Լեւանդ Հեռաջ այս առթիւ կը գրէ թէ «կառավարութիւնը պէտք է նախ պատժէ այս քանդումին հեղինակները, եւ յետոյ վերստին չի նկատայ եկեղեցիները»:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՆ անցեալ չարթուան նիստին մէջ ցաւով նկատեց թէ Պատրիարքարանի կողմէ կառավարութեան մօտ եղած զիմուսներու յուսալից պատասխաններ կը տրուին, բայց դորձերու ընթացքը չի փոխուիր: Առանայի նպատակ դորձին մէջ, ինչպէս նաեւ ընդհանուր ապահովութեան վերաբերեալ հարցերու մէջ, հակառակ եղած խոստումներուն, ու եւ է դահացում չէ տրուած: Որոշուեցաւ այս ամէնը վերստին հաղորդել կառավարութեան, միեւնոյն տոնէն առաջարկել Հայ մէպոսներուն, որպէս զի իրենց որոշած ձեռնարկը կատարեն կառավարութեան կամ Խորհրդարանին մօտ: Այս որոշման տիւրը ստիպողականութիւն մը կուտան Մշոյ եւ Բաղէշի առաջնորդներէն, նաեւ Գուրուչայէն, Սղերդէն եւն. եկած հեռագրեր, որով նոր սպանութիւններ, առեւանգումներ եւ աւարառութիւններ կը ծանուցանեն, եւ ջարդի երկիւղ կը մասնանշեն:

Մասն. Ժողովի Ուրբաթ օր Երուսաղէմի Պատր. ընտրելիաց եռապատիկ ցանկ կազմեց. Ներկայ 16 աքղամներու գաղտնի քուէարկութեան արդիւնքն է. — Տ. Եղիշէ Եպ. Զիլինկիրեան՝ 13 քուէ, Տ. Գրիգորիս Վրդ. Պօյաճեան՝ 7 քուէ եւ Տ. Տրդատ Եպ. Պալեան 5: Երէցեան Ս. ստացաւ 4 քուէ, եւ առաջին երեքը նկատուեցան Պատր. ընտրելի Ժողովը որոշեց վանքին բարեկարգական խնդիրներն ալ ի գլուխ հանել:

Տնտես. Խորհրդոյ քննութեան եւ հաշուեցոյցին համաձայն, Ժողովը 30ական ոսկի սահմանեց Պոլսէն մեկնելիք կաթող. պատգամաւորներու ճամբու ծախքը:

ԳԱՒԱՌԱՅԻ ՆՊԱՍՏԸՆԿԱԼ ՈՒՍՈՎՆՈՂԱՅ ռ եւ է նիւթական օգնութիւն ընձեռելու անկարող ըլլալին յայտնած են Միացեալ եւ Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնները՝ յիշելով իրենց ծրարին: Նոյնպէս Հ. Բ. Ը. Միութիւնը, եւ Սահտարեան Խնամակալութիւնը մերժած են ու եւ օգնութիւն Հեռուապէս Խառն Ժողովը որոշած է հրահանգ տալ Տնտես.

Խորհուրդին, որպէս զի կանոնադրով հաստատուած միջոցներով շարունակուի հայթայթել սահմանուած ելմտացոյցէն պէտք եղած դուրսը: Միւս կողմէ Տնօն. Խորհուրդը վիտողութիւններ ներկայացուցած է թէ նոյն ուսանողաց հիմամակալութիւնը պէտք եղած քննութիւնը չէ բրած թէ որո՞նք են ազգին օգնութեան խրաչէս կարօտ եղողները, եւ թէ իրաւունք չունեցողներ ալ դրամ կը ստանան:

ՏՓՂԻՍԻ Հորիզոն օրաթերթին հրատարակութիւնն ստանձնած է, նոյ. Յէն, վերջերս կազմուած Լոյս Հրատարակչական ընկերութիւնը:

«ԼՈՒՍԱՐՁԱԿ».— Շր. առաւօտ սկսաւ հրատարակել այս անունով նոր օրաթերթ մը, արտօնատիրութեամբ Սիմոն Էֆ. Ձէօմէքճեանի, եւ պատասխանատու-տնօրէնութեամբ Արտաշէս Էֆ. Գալփազճեանի, երկու ծանօթ եւ սիրուած գէօքեր Պոլսահայ լրագրութեան մէջ, Հրատարակուած չարթուան մը թիւերը յուսալից ապագայ մը կը խոստանան լուրերու թարմութեամբ, եւ յօգուածներու շահեկանութեամբ եւ անկաշկանդ, խիզախ ոճով:

Ջերմ շնորհաւորութիւններով յաջողութիւն կը մաղթենք:

ՊԱՏՐ. ՓՈԽԱՆՈՐԴ Տ. Ղեւոնդ Մ. Վ., ի դիմաց Տեղապահ Ս. Հօր, ցաւակցական այցելութիւն տուաւ Յովն. Պէյ Տատեանի, եղբորը՝ Մկրտիչ Պէյի մահուան ատթիւ:

#### ԱԶԳ. ԺՈՂՈՎԻ ԵՐԷԿՈՒԱՆ ՆԻՍԵ

Ազգային Ժողովը երէկ (25 նոյ.) դուրսուեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանը: Նիստը գլխաւորաբար նուիրուեցաւ հարստահարութեանց խնդրոյն: Տ. Հմայեակ Ս. բուն լեզուով քննադատեց Վարչութիւնն ալ, Տեղապահ Ս.ն ալ, նոյնիսկ Ազգ. Ժողովն ալ եւ Հայ մեպոլաններն ալ, որոնք եկեղեցիի մը քանդուովն եւ տեղը մզկիթ մը շինուելուն, եւ այնքան սպանութիւններու եւ հարստահարութեանց ատթիւ լուռ կը մնան, մինչ մետրոպոլի մը


սպանութեան ատթիւ Պօլս. Էֆ. հարցապնդումներ կը տեղացնէ, եւ քննիչներ կը զրկուին Գ. Երզ Էֆ. Ասլանեան, ի դիմաց Վարչութեան տուած պատասխանին մէջ յայտարարեց թէ Բաղէշի կուսակալի փոխանորդն ալ կը հաստատէ շատ մը չեքեքներ կազմուիլը տեղւոյն մէջ, եւ զինեալ վիճակով Հայ եւ Քուրդ գիւղերու վրայ յարձակիլը, եւ աւարառութիւն եւ սպանութիւններ գործելը: Նիստը շարունակուեցաւ դանիակ, Գ. Ջօհրապ Էֆ.ի առաջարկութեամբ:

Ժողովը կարճ վիճաբանութիւնէ մը ետք որոշեց յառաջիկայ չարթու կատարել Պոլսոյ Պատրիարքի ընտրութիւնը:

#### ԳԻՏԱԿԱՆԻ ՄԸ ԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Նշանաւոր բնագիտութ. Ժ. Հ. Ֆապո, զոր Վիկտոր Հիւկօ Միջասնեռու Հովն. րոսը կը կոչէր, անցեալ ամիս իր հետազօտութեանց վաթնամեայ յօդերանը կատարուելու առթիւ, պատասխանելով այցելուի մը հարցումին՝ թէ կը հաւատայ Աստուծոյ, ըսած է:

— Ձեմ կրնար ըսել թէ կը հաւատամ Աստուծոյ, այլ թէ կը տեսնեմ զայն: Առանց Անոր բան մը չեմ տեսներ, առանց Անոր իրաւոր է ամէն բան: Այդ համազուտ հետզհետէ աւելի խորապէս արմատացած է սրտիս մէջ: Ամէն դար իր յիմարութիւնն ունի, Անաստուածութիւնը յիմարութիւն մը կը նկատեմ: Ներկայ ժամանակին հիւանդութիւնն է ան Կարէշի եւ մոտրագերծ ընել զիս, քայց հնար չեւ Աստուծոյ վրայ հաւատքը խելք ինձմէ:



Արտօնատէր ՀՄԱՅՆԱԿ ԲԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ

ԶՈՐՄԱՅՐ ԲԶՆՅ. ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

# “ՏԱՃԱՐ”Ի

## ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

|                            |            |
|----------------------------|------------|
| Պոլսոյ եւ Դաւառաց՝ տարեկան | 40 դրուց   |
| Արտասահմանի համար          | » 10 Ֆրանք |
| Ռուսիա                     | » 4 ռուբլի |
| Ամերիկա                    | » 2 օսլար  |
| Զեռէք կը ծախուի պրակը      | 40 փարա    |

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրիստանալու

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԵԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻՒՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

#### ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-  
նորդ Տ. Արսէն Բէնյ. Դերձակեան

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բէնյ. Գա-  
բիկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-  
ղոս Վրդ. Գաֆթանեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բէնյ. Պողար-  
ԱՏԱԲԱԶԱՐ. — Տ. Սերոբէ քհ. Պուրմայեան

ԱՖԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր  
Ա. Բէնյ. Տօնէլեան

ԲԱՅԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.  
ԲԱՂԷՇ. — Առաջնորդ Տ. Սարգէն Ծ. Վ.

Գալէմեան  
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բաբգէն Եպս.

Կիւլէսէրեան  
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բէնյ. Սար-

գիսեան  
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.

Դիմարսեան  
ԵՐԶՆԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ

Բէնյ. Սրամեան  
ԶՄԻԻՖՆԻԱ. — Տ. Յարութիւն Բէնյ. Տ.

Սարգսեան  
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Դաւուստ քհնյ. Տ.

Դաւուստեան  
ԿԱՐԻՆ. — Առաջն. փոխանորդ Տ. Ներսէս

Ա. քհնյ. Վահանեան

ԿԻՐԱՍՈՆ. — Տ. Սրապիոն քհնյ. Այլաեան  
ՀԱԼԷՊ. — Տ. Մկրտիչ Բէնյ. Մուրասեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բէնյ. Վարժա-  
պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան  
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ռակի Բէնյ. Պրապեան

Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բէնյ.  
Տառեան

ՈՒՇՍ. — Յարութիւն քհն. Առաքաղեան  
ՊՐՈՒՍԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Վար-

դան Ծ. Վ. Գապարեան  
ՊԱՏՐԱՍ. — ՊԱԼԷՍԻՐ. — Տ. Կուսմի Բէ.

Ֆիրդաթեան  
ՊԱՂԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.

Եպիսկ. Կէօմրիւքեան  
ՌՈՒՍՏՈՒՐ. — Տ. Մկրտիչ Բէնյ. Մըրջ-

նիկեան  
ՌՈՏՈՍԹՈ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.

Վրդ. Ասլանեան  
ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.

Թէոփիլէ Բէնյ. Օտապաղեան.  
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-

պետ Բէնյ. Թուխմանեան  
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բէնյ. Տրէզ-

եան  
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-

եան  
ՏՐԱՊԶՈՆ. — Առաջնորդ Տ. Սերոբէ Վ.

Սամուէլեան  
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վահանա-

պուհ Բէնյ. Բիպարեան  
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.  
ՅՐԷՋՆՈ. — Յակոբ էֆ. Նշկեան

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ ԵՒ ՇԷՐԼՕՔ ՀՕԼՄՍ.  
— Դրեց Եր. Օսեան. — Եւրոպական լա-  
ւադոյն վիկագրի մը արժանի՝ եւ յոյժ հե-  
տաքրքրաշարժ այս վէպին երկրորդ հա-  
տորն եւս հրատարակուեցաւ: Դին Յ Ղրշ.:  
Կեդրոնատեղի՝ Պ. Պաշենց գրասուն, Պո-  
լիս. Չագմագնըր:

ԱՊՈՒՇՆԵՐՈՒ ՏԱՐԵՑՈՅՑԸ. — Դրեց  
մեր ամէնէն սրամիտ երգիծաբանը Եր.  
Օսեան: Դին Յ Ղրշ.: Կեդրոնատեղի՝ Պ.  
Պաշենց գրասուն:

Այն բոլոր նոր բաժանորդները ո-  
րոնք հիմակուրէ կը բաժանորդա-  
գրուին Տանարին՝ յառաջիկայ տար-  
ուան համար, մինչեւ տարեգլուխ հրա-  
տարակուելիք թիւերը ՁՐԻ ՊԻՏԻ ՍՏԱ-  
ՆԱՆ:

## “ՀԱՅՐԵՆԻ ՏԱՐԵՑՈՅՑԸ

“Կազմեց՝ ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ

Բոլոր անոնք որ ունին Հայկական ոգի  
ու կարօտ մը դէպի ցաւակոծ Հայրե-  
նիքը, բոլոր անոնք որ կ'ուզեն վերադի-  
հայրենի հողին բարախումը հզօր, Սէրը  
ու Տառապանքը, թող շտապեն մենի «Հայ-  
րենի Տարեցոյց»ը, որ շարունակութիւնն  
է «Դաւառին տարեցոյցը»ին եւ կուգայ  
մեծ պակաս մը լեցնելու: Աննախընթաց  
բաժիններով, 70է աւելի նոր պատկերնե-  
րով, գրական, գիտական, ընկերական  
պէտքերի ու անթիւ նիւթերով ճոխացած  
այս Նոր Տարուան գիրքը ՀԱՅԵԼԻՆ է  
Հայ Սրտին ու մտքին:

Դին՝ 7 դահեկան: Դիմել՝ զրաւաճառ-  
ներուն, բոլոր ծխավաճառներուն եւ հե-  
ղինակին՝ Չափաւաճըրար, Մեծ Նոր Խան,  
թիւ 45:

## ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Տ. ՏՕՂԲԱՄԱՆԱՆ

Սուրբան-Համաւ Մօղա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ